րից, ինչ որ կէր՝ խուրտից[1]), առից, տարաւ։

Սարկաւագն էլաւ, առից արընթրթախ շապիկ, առից, էկաւ Սասմայ քեաղաք. Սասմայ քեաղաք որ մտաւ, խարցնից.—Մե տէր Դաւիթ ո՞րտեղն ի։

Ասին.—Կեացի պառուու տուն, գինի կ'խըմը։

Կինաց, կանգընաւ վեար տուան, կանչից.

«Մի տէր Դաւիթ նստիր ի մեանչ սողբրթին[2]),
Կ'խմէր նուան գինին.
Էկին, սպանիցին քեառսուն տէրտէր,
Քեառսուն վարդապիտ, քեառսունից մէկ պակաս
սարկաւագ»*)։

Էլ չխոսկացաւ[3]), էսաց.—Ժամու խունկն ի պակաս, թէ ձէթն ի պակաս, տուէք՝ սարկաւագ առնը, էրթայ։

Սարկաւագ էսաց.—Նեա խունկն ի պակաս, նեա ձէթն ի պակաս։—Արընընթ[4]) շապիկ էխան, էթալ յէռջիւ Դաւթին։

---

[1]) Մաքրել, սրբել։ [2]) Երգ է։ [3]) Չհասկացաւ։ [4]) Արիւնոտ։

*) Բ. վարիանտում տիրացուն այս երգով է դիմում Դաւթին.

«Ափսո՜ւս, խազա՛ր ափսուս,
Սպանիցին վարդապիտնիր,
Ինչ ոսկը գաւազան կ'բռնէր,
Քարուզ կ'տէր ժողովրդին։

Ափսո՜ւս, խազա՛ր ափսուս,
Սպանիցին քեառսուն տէրտէր,
Ինչ ոսկը սրկին բռնած ձեռ՝
Սրբութին կ'տէր ժողովրդին։

Ափսո՜ւս, խազա՛ր ափսուս,
Սպանիցին քեառսուն պակաս մէկ տիրացու,
Ինչ ըզոսկը բիւրվառ ձեռ՝
Խունկ կ'ծխէր յըռջիւ ժողովրդին»։